

Իմ հոգիս ալ պատկերիդ պէս նորոգէ,
 Լոյս թող ըլլայ, նըշոյլի պէս սիրասուն.
 Քեզ պէս ըլլամ՝ պարզ ու մաքուր տեսութիւն,
 Փայլուն շընորհք, աչքերս աստղեր բիւրեղէ:

Ագովոյ, 12 Նոյմ. 1975

ՈՂՐ ԽԱ.

Որդի Աստուծոյ Հօրն երկնաւորի
 Ահաւոր ծընունդ, փառքի լոյս մեղի.
 Արեւէն անդին ունիս նըշոյլներ,
 Ուր տիւն է պայծառ, խաւար չի տիրեր:

Կեանք կ'առնէ մեռածն, օր է յաւիտեան,
 Վէրքը կ'ողջանայ, լացը կը դադրի,
 Ազատ են մարդիկ, կը փշրի շղթան.
 Գիշերը կ'անցնի, մութ դէմքեր չըկան:

Դուն չեկար ըզմեզ առաջնորդելու
 Կորուստի ճամբան. թո՛ղ իմ ծանր մեղքերս,
 Երկինքներ երթամ, աշխարհէն հեռու,
 Անանց օրերու լոյսը վաշխելու:

Ագովոյ, 2 Դեկտ. 1975

ԾԱՆՕԹ. ԽՄԲ. - Հեղինակին մահով (10 Նոյեմբեր 1977) ամաւարտ կը մնայ այս
 ֆերթուածաշարքը, որ ծրագրուած էր հասցնել միմէն ՈՂՐ ՂԴ, Նաբեկի «Ռամբո-
 բում քիւիմ համաձայն»:

ՕՐՈՒԱՆ ԳԻՐՔԵՐ

ԳՐԱԽՕՍԱԿԱՆՆԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Ե-ԺԸ դդ., Հատար Բ.
 Առաքել Սիւմ. - Բէապրիկէ Հոռմ.

Գրեց

ՅԱԿՈԲ Ս. ԱՆԱՍԵԱՆ

Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրտ. 1976, էջ XXVI
 + 1546 + 2 չի. սիւմ (համագումար՝
 799 էջ, մեծադիր, երկսիւմ): Տպագ-
 րակ՝ 1500: Գին՝ 5 ռ. 42 կ.:

Իր անդրանիկ եղբորմէն տառնեւ-
 թը տարի յետոյ լոյս տեսաւ, վերջա-
 պէս, երկար ժամանակէ ի վեր սպաս-
 ուած այս հոյակապ հատորը, որ ար-
 դէն 1987 թուականին, ըստ մեր քաղա-
 տեղեկութիւններուն, յանձնուած էր ՀԵ-
 րատարակութեան՝ Երեւանի ՀՍՍՀ Գի-
 տութիւններու Ակադեմիայի՝ Պատմու-
 թեան Հիմնարկի կողմէ: Ո՛րքան, ան-
 շուշտ, քաջաբերական պիտի ըլլար բազ-
 մահմուտ ու վաստակաւոր Հեղինակին
 համար՝ եթէ իր ծննդեան եօթանասնա-
 մեակի յիշատակին առիթով (1974) լոյս
 տեսած ըլլար այս բազմաթէք աշխա-
 տութեան ու շարքին նաեւ երրորդը.
 Հատորներ՝ որոնք սքանչելի փառապը-
 սակը պիտի կազմեն այս բազմավաստակ
 մշակին մեղուաջան ու երկարամեայ աշ-
 խատանքին, միաժամանակ՝ հսկայօրէն
 պիտի նպաստեն հայագիտութեան արագ
 զարգացման, եւ հուսկ՝ ոսկեղէն օղակը
 պիտի դառնան ՀՍՍՀ Գիտութիւններու
 Ակադեմիայի Հրատարակութիւններուն:

Արդարեւ, առաջին իսկ պահէն՝ երբ
 կը թերթատենք այս հատորը, կը զգանք
 իսկոյն թէ մեծանուն Աճառեանի ոգին
 կը թեւածէ հոն, անոր նման անդուլ
 աշխատող, անխնջ հաւաքող, պրպտող

ու քննարկող բանասէր մը ցուցարբե-
 լով, իր մէջ մէկ էջէն, յանձին Յակոբ
 Ս. Անասեանի, որ իսկական ակադեմա-
 կանի մը բոլոր տոմարներն ունի:

Հատորը կը բացուի նախորդին մէջ
 նշուած «Ձեռագրացուցակներու շարու-
 նակութեամբ, §§ 179-355, էջ III-XXII
 (մենք պիտի առաջարկէինք զրել՝ Գ-
 իթ). այնուհետեւ կը ներկայացունեն, Ա
 զրէն՝ 153 անուն, թողլով առաջումնե-
 րը՝ որոնք հարկւրները կ'անցնին. իսկ
 Բ զրէն՝ 111 անուն. կցուած են 16 անուն՝
 որպէս յաւելում Ս զրէն. ուրեմն,
 ընդամենը՝ 270 մայն կամ անուն, շուրջ
 800 էջի վրայ: Մենագրութեան եւ խո-
 րունկ ուսումնասիրութիւններու հան-
 դամանքն ունին յատկապէս հետեւեալ-
 ները. Առաքել Սիւմեցի (1-89), Աստու-
 ծաբանական եւ Դաւանաբանական գրա-
 կանութիւն (216-308), Աստուածաշունչ
 Մատեան - Հայկական բնագիր (309-
 668), Արիստոտել Ստագիրացի (806-
 872), Աւետիք Եւդոկիացի (980-1009),
 Բաղդասար Դպիր Կ. Պալսեցի (1062-
 1160), Բառարանագրական միւսքեր (1178-
 1242), Բարբաղիմէոս Բռնոմացի (1284-
 1320), Բարսեղ Կեսարացի (1344-1405):

Իւրաքանչիւր անունի կամ մայնի հա-
 մար՝ յետ հաղորդելու կենսագրական
 եւ քննարկական ճշգրիտ ու կուռ տե-
 ղեկութիւններ ու մանրակրկիտ անդրա-
 դարձութիւններ, նկատմամբ ինքնագիր
 եւ թարգմանածոյ երկերու, օգտագոր-
 ծելով տպագիր եւ անտպագիր անհամար
 ձեռագրացուցակներ, եւ զգաւորաբար՝
 Երեւանի Մաշտոցի անուան Մատենա-
 դարանի Հարուստ Հաւաքածոյին ձեռա-
 գիրները, հուսկ՝ կը ներկայացնէ, իւ-
 րաքանչիւր հարցի շուրջ, սպառելի գրա-
 կանութիւն (bibliographie), որ եր-

բեմն կ'երկարիր էջերով ու բացառիկ արժեք կ'ընծայէ այս գործին (տե՛ս, օրինակի համար, Աստուածաշունչ մատենադարանի վերջաւորութեան, սինակ 543-688), եւ անտարակոյս՝ յաւելտ երախտապարտ պիտի թողու ապագայ բոլոր ուսումնասէրները: Իւրաքանչիւր գրքի մասին յաճախ տրուած ամփոփ տեղեկութիւններէն յայտնի վը նշմարուի՝ թէ Հեղինակը քննութեան անաչառ բովէն անցուցած է այդ բոլորը:

Անասեանի այս Մատենագիտութեամբ յարուսթիւն կ'առնեն նաեւ անյիշատակ հեղինակներ ու հին գրիչներ, որոնց երկերը (ճառեր, տաղեր, մեկնութիւններ, թարգմանութիւններ, եւայլն...) ցարդ պահուած՝ թաքուել կը մնային ձեռագիրներու մէջ: Կը ճշտուին կարեւոր տարեթիւեր, անուններ, գործեր. վը յստակուին հարազատութեան վերաբերող բանասիրական վիճուած հարցեր, կը դատորոշուին համանուն հեղինակներ (Արիստակէս՝ 9, Աստուածաւարտ՝ 21, Աւետիս կամ Աւետիք՝ 24, Բարսեղ՝ 23, Բարքաղիմէոս՝ 10, եւն...), կը լուծուին բազում տարակոյսեր:

Անասեան հմուտ մասնագէտն է հայագիտութեան գլխաւոր ճիւղերուն, պատմականէն՝ գրականին, ընդունակէն՝ աստուածաբանականին, փիլիսոփայականէն՝ սուրբ-գրայինին, դասանարանականէն՝ վարքագրականին: Իր մեծագոյն արժանիքներէն մէկն ալ այն է, որ այս գործով՝ պաշտօնապէս ու հանգամանօրէն՝ հայագիտութեան շրջանիւններս կը հրաւիրէ աստուածաբանական ու մանաւանդ դասանարանական գիտութիւններն ալ՝ իրենց բազմաճոխ գրականութեամբ, յատուկ եւ արժանաւայել ամպիրոն ընծայելով անոնց, ու միաժամանակ մեծապէս զնահատելով այն հոյակապ ժառանգութիւնը՝ որ դարերուն հետ փոխանցուած է մեզի:

Անասեանի այս աշխատութեամբ՝ մեր մէջ մատենագիտութիւնը վը դառնայ իսկական գիտութիւն, միջազգային տարողութեամբ, պիտի համարձակինք ըսել՝ նոյնիսկ գերմանական չափանիշով. եւ ասիկա կ'ուզենք նշել ո՛չ թէ որպէս

պարծանքի առարկայ մը՝ հայ իրակա՜նութեան մէջ, այլ ընդդէմը համար այն իրողութիւնը՝ թէ այսուհետեւ պատմաբանասիրական գիտութիւնները, ինչպէս կ'անարկէինք այս գրութեան սկիզբը, հսկայի քայլերով պիտի յառաջադիմեն, ընադրային հրատարակութիւնները նոր սլացք պիտի առնեն, ու նենալով կարեւոր ատագին ու մեկնակէտը, գիտական ամուր հիմերու վրայ:

Բայց մեր բազմարդիւն հեղինակը միաժամանակ շատ զուսպ է ու համեստ, նոյնիսկ իր մեծարժէք աշխատանքի արդիւններուն մասին, ինչպէս ամէն հարազատ գիտնական, եւ ա՛յս է մանաւանդ որ կրկնակի արժէք կ'ընծայէ դորին եւ արժանի կը դարձնէ զինք մեր խորունկ ու անկեղծ զնահատանքին: Աստուածաբանական ու դասանարանական մեր գրականութեան ընծայած 46 մեծագիր էջերէն ետք, ուր ներայացուած են 175 աշխատութիւններ եւ 278 հեղինակներ, այսպէս կ'եղարկացնէ Հեղինակը. «Ամենեւին լիակատար չենք համարում աստուածաբանական եւ դասանարանական նիւթերի այս հաշուառումը: Լիակատար կարող է լինել միայն ա՛յն ժամանակ, երբ հայ մատենագրութեան լիակատար հաշուառումն աւարտած կը լինէ» (սինակ 308, տող 21-26): Ինչպէս այս տողերուն մէջ, առհասարակ ամբողջ հատորի ընթացքին՝ չենք հանդիպիր աւելորդ նախադասութեան մը, կամ նոյնիսկ աւելորդ բառի մը: Իսկ իր անձին եւ աշխատութեան մասին՝ չկայ որեւէ խօսք կամ ակնարկ:

Սակայն իր գերազնիւ համեստութիւնը մենք երբեք վիրաւորած չենք ըլլար՝ եթէ համարձակինք ընդդէմը, այս առիթով, քանի մը կարեւոր տարրեր իր բազմաթիւ արժանիքներէն:

Անասեանի սոյն երկի առաջին հատորի ներածութեամբ՝ առաջին անգամն էր որ կը շարադրուէր հայ մատենագիտութեան պատմութիւնը. ախր տողերով՝ դիւտ մը կը կատարուէր հայ մը շակոյթի ուսումնասիրութեան բնագաւառին մէջ. այն՝ թէ մատենագիտութիւնը, որպէս գիտութիւն, թէեւ ձեւա-

ւորուած է թիւ. դարու ընթացքին, սակայն մատենագիտական աշխատանքներու հետքերը բաւական հին են մեր մէջ՝ հասնելով մինչեւ հայ գրի ու գրականութեան սկզբնաւորման շրջանը, այսինքն՝ թէ մատենական գիտութիւնը դոյութիւն ունեցած է Հայաստանի մէջ ե. դարէն, երբ եկեղեցական նութրապետութեան հեղինակութեամբ՝ սկսած են կազմուիլ կանոնական եւ անկանոն դրքերու ցանկեր. յաջորդաբար, Զ-Ժ-դար, հրապարակ ելած են հետզհետեւ աւելի զարգացած եւ ընդարձակ ցանկեր՝ անվանի գրքերու, արգիլուած գրքերու, աղանդաւորական մատենաներու, աքտաքին եւ ճնուրբ գրքերու, հայ մատենագիրներու, հայ եւ օտար պատմագիրներու, եկեղեցական մատենագիրներու, վարդապետական գրքերու, մեկնողական գրքերու եւ մեկնիչներու շարականագիրներու եւ ժողովապատմիչներու:

Մատենագիտական այս ցանկերուն հետ, ունինք նաեւ զանոնք կազմողներու անուններ, որոնք յատկապէս ԺԳ. դարէն օղակ մը կը նետեն մինչեւ ԺԷ. դար. այսպէս՝ Պարտուպեան դար. այսպէս՝ Պարտուպեան (ԺԳ. դար), Գրիգոր՝ որդի Արաթայ (ԺԳ. դար), Գրիգոր Գառնառաց խոյագիրը կըրուէ Գրիգոր Գառնառաց խոյագիրը կըրուէ 165-րդ ցուցակը կը բովանդակէ շուրջ 165 միակուր. ապա կու գան Միխիթար Այրիւնէցի, Կիրակոս Գանձակեցի, Սարգիս Երէց, Գրիգոր Տաթեւացի, Առաքել Սիւնեցի, Ղազար Ջահկեցի, Վարդան Բանեցի, եւն...:

Այսպէս, ուրեմն, մատենական գիտութիւնը՝ դարերու ընթացքին դարձանագիտութիւն մը մինչեւ մեր օրերը: զանալով՝ հասած է մինչեւ մեր օրերը: Հայ մատենագիտութեան յիշալ նիւթերը, թէեւ մասամբ հրատարակուած են, եւ նոյնիսկ ուսումնասիրուած են, եւ նոյնիսկ արժանաւորուած են, ոչ մէկուն ուշադրութիւնը գրաւած էին՝ որպէս մատենագիտական նիւթեր. այլ որպէս մատենագիտական նիւթերով ոչ ոք զբաղուած չէր, անոնց պատմութիւնը կերտելու

առումով: Անասեանն եղաւ առաջինը՝ որ հայ մատենագիտութեան պատմութիւնը յօրինելու զազափարն ունեցաւ, ու զայն իրագործեց վերոյիշեալ Ա. հատորի ներածութեամբ, որ բանասիրական մեծարժէք ու բարձրորակ ուսումնասիրութիւն մըն է ինքնին, որով մեր մէջ ծընունդ առաւ հայագիտութեան նոր ճիւղ մը՝ հայ մատենագիտութեան պատմութիւնը: Այդ առիթով՝ Անասեան հրատարակեց նաեւ թիւով 25 բնագիրներ, որոնք մատենագիտական կարճ կամ ընդարձակ ցանկեր են, հիներէն մեզի հասած (Ա. հատոր, էջ XXXIX-LXXVI):

Անասեանի այս գրութիւնը այնքան հիմնական դեր ունեցաւ հայ մշակոյթի պատմութեան մէջ, որ վերոյիշեալ ներածութեան եւ անով յայտնաբերուած նիւթերուն վրայ հիմնուեցան անկէ ի վեր լոյս տեսած մատենագիտական բոլոր ուսումնասիրութիւնները:

Ուրախութեամբ կրնանք նշել հուսկ՝ թէ այդ ներածութեամբ եւ հրատարակութեամբ է որ Հայաստանի մէջ զազազացիութեան արժանացաւ «Մատենագիտութիւն» բառը, անհետ վտարելով մինչեւ այդ ժամանակ իշխող գրքի գրաֆիկա տառադարձուած ձեւը:

Առաջին հատորին հրատարակութեան առիթով՝ հաճոյքն ունեցած էինք շնորհաւորական տողերով ու զնահատանքով ողջունելու Անասեանի Մատենագիտութեան իսկական արժէքը (Բազմ. 1961, Թ. Թ-8, էջ 178-180). նոյնը պիտի ուզէինք կրկնել հոս, աւելցնելով՝ թէ մեր զնահատանքը այժմ փոխուած է հիւսուցումի: Երբ կը նկատենք մանաւանդ՝ թէ Անասեան միւսմիտակ ձեռնարկեր է գործի մը, զոր Յւրպայի մէջ բազմաթիւ աշխատակիցներու օգնութեամբ միայն կրնան գլուխ հանել, կամ՝ ինչպէս սովորութիւն է՝ գիտական խմբակի մը անդամներով:

Մենք ի սրտէ ոյժ, առողջութիւն ու կորով կը մաղթենք բազմակուսական Հեղինակին, որ կարենայ ի գլուխ հանել իր մեծղի ծրագրերը:

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԵՐ-ՆԵՐՍԷՍԱՆ